



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

76

2

L-85

my. 26

2010

ԼՍԱՐԱՆ

ԿԵՆՏԱՂՕԳՈՒՏ ԳԻՏԵԼԵԱՑ

Ա.

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

ԴԱՍ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ



ԻԹԻՆՈՒՍԻԱ

Իսպարսկի Խաչիպեան Ուսումնարանի Հայոց

—
1861.

... անցի միջոցառումը ...
 — Եւ ճառս մանկանոցս ինչպէս յարմարեալ է ...
 -ցապի մեծածնն— ...
 -ցասով դժուարեմբի կորցնել մաքանցից որ սէրացոց ...
 -բայնց զմեք ...
 -բայնց զմեք ...
 -ոյնն մաքան մեծածնն զն ինչպէս որ զն ինչպէս ...
 -սով ինչպէս յարմարեալ է մեծածնն : մաքանցիցս ինչպէս ...
 -սով ինչպէս յարմարեալ է մեծածնն : մաքանցիցս ինչպէս ...

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

... զանոց զանոց ...
 -այնպէս մեծածնն ինչպէս յարմարեալ է ...
 -այնպէս մեծածնն ինչպէս յարմարեալ է ...
 -այնպէս մեծածնն ինչպէս յարմարեալ է ...
 -այնպէս մեծածնն ինչպէս յարմարեալ է ...

Ա Ա Տ Ո Ւ Ա Ծ Ա Շ Ո Ւ Ն Ջ Ս Ո Ւ Ր Ք Գ Ր Ո Ց

... զանոց զանոց ...
 -այնպէս մեծածնն ինչպէս յարմարեալ է ...
 -այնպէս մեծածնն ինչպէս յարմարեալ է ...
 -այնպէս մեծածնն ինչպէս յարմարեալ է ...
 -այնպէս մեծածնն ինչպէս յարմարեալ է ...

Դ Ա Ս Մ Ե Տ Ա Ս Ա Ն Ե Ր Ո Ր Գ .

... զանոց զանոց ...
 -այնպէս մեծածնն ինչպէս յարմարեալ է ...
 -այնպէս մեծածնն ինչպէս յարմարեալ է ...
 -այնպէս մեծածնն ինչպէս յարմարեալ է ...
 -այնպէս մեծածնն ինչպէս յարմարեալ է ...



Մովսէս մարգարէին պէս հրաշալի եւ հրաշագործ մարդու մը քարոզութիւնն ու Աստուծոյ կողմանէ ըրած ինչպէս պանութեան սկիզբը պիտի տեսնեմք այսօրուան դասախօսութեան մէջ : Հրաշալի՛ մարդ, վասն զի մէկ միլիոնի չափ ժողովուրդ, այն ալ Իսրայելացւոց պէս անհանդարտ, անհանգիստ, տոբոյի, տրտնջող, Թանձրամիտ ժողովուրդ, երկրէ երկիր, աշխարհիք աշխարհիք պիտի տանի, օրէնքներ՝ կարգեր՝ կանոններ պիտի տայ նոցա, նոցա պիտոյքը պիտի հոգայ, նոցա դատաստանները պիտի կտրէ, նոցա յանցանքները պիտի պատժէ, նոցա ապերախտութիւններուն պիտի համբերէ : Վերջապէս նոցա աղէկութիւն ընելէն պիտի չլադրի մինչեւ որ բարձր լեռան մը վրայէն ձեռքերը դէպի երկինք վերուցած՝ պիտի օրհնէ այն միլիոնաւոր ժողովուրդը եւ նոցա ժառանգելու երկիրը, եւ առ Աստուած պիտի երթայ՝ իւր հաւատարիմ ծառայութեան վարձքը ընդունելու : Ո՞չ ապաքէն հրաշալի՛ մարդ է այսպիսի մարդը, մանաւանդ Թէ հրեշտակ է եւ ոչ Թէ մարդ մահկանացու : մտ յոյսմտ ծառայող զո ցնամտիք իսկս ինչ

Բայց Մովսէս մարգարէն նաեւ հրաշագործ է, այսինքն իբրեւ դեսպան եւ փոխանորդ Աստուծոյ՝ իշխանութիւն առած է, — ինչպէս որ տեսանք ու դեռ պիտի տեսնեմք, — մեծամեծ հրաշքներ ընելու, որպէս զի բնական կերպով իրեն ու իւր խօսքերուն հաւատալ՝ մտիկ ընել չուզողները, բնութենէ վեր, մարդկային կարողութենէ վեր զօրութիւն մը տեսնեն վրան ու խոնարհին, հաւատքի գան: Տեղն է ուրեմն որ երկու խօսքով հասկըցնեմք նախ թէ հրաշք ըսածդ ի՛նչ բան է:

Հրաշք կըսուի այն գործողութիւնը կամ պատահմունքը որ բնութեան օրէնքներէն դուրս, բնութեան օրէնքներուն հակառակ է. օրինակի համար, բնութեան օրէնքով՝ մեռելը չկրնար կենդանանալ. երբոր կենդանանայ՝ յարութիւն առնու, հրաշք է. բնութեան օրէնքով՝ ծանր մարդը ջրին երեսը չկրնար քալել՝ առանց մէջը ընկողմելու. երբոր մէկը քալէ ջրին երեսը, հրաշք է. իծնէ կոյրը կամ խուլն ու համրը երբոր մէկ խօսքով՝ կամ վրանին ձեռք ղնելով մը կառողջանան, այսինքն կոյրը կտեսնէ, խուլն ու համրը կլըսէ ու կխօսի, հրաշք է. երբոր ապառաժ քարէ մը մէկ զարնուածքով յորդահոս աղբիւր մը կվազէ, հրաշք է. երբոր ձիւնի պէս մանանայ կուգայ երկնքէն ու բիւրաւոր մարդիկ տարիներով կկերակրէ անբեր անապատի մէջ, հրաշք է:

Կհարցուի թէ արդեօք այսպիսի հրաշքներ կրնա՞յ ընել Աստուած, ըրե՞ր է արդեօք, եւ ե՞րբ կընէ: — Աստուած հրաշք ընել կրնա՞յ արդեօք ըսելը աւելորդ հարցմունք է այն մարդուն համար որ կհաւատայ թէ Աստուած ամենակարող է, այսինքն բան մը չկայ որ Աստուծոյ համար անկարելի լինի: Եւ թէ որ հրաշք ըսածդ բնութեան օրէնքներէն դուրս բան մըն է, ինչո՞ւ պիտի չկարենայ կամ չկամենայ Աստուած այն օրէնքները լուծել երբոր պատշաճ կամ հարկաւոր համարի: Մարդս բնութեան օրէնքները չկրնար փոխել, վասն զի անոնց ղնողը ինքը չէ. բայց Աստուած տէր բնութեան, արարիչ ամենայն արարածոց յոջնչէ, եւ գերագոյն օրէնսդիր բնութեան, ինչո՞ւ պիտի չկարենայ երբեմն այն օրէնքները լուծել՝ որպէս զի աւելի յայտոնի իմացընէ մարդկանց թէ ինքն է բնութեան տէրը: Յոգ 1: 26

Այսպիսի հրաշքներ, այսինքն բնութեան օրէնքներէն վեր բաներ ամէն ժամանակ եւ ամէն տեղ ըրեր է Աստուած, ինչպէս որ տեսանք մինչեւ հիմա պատմուած պատմութիւններուն մէջ, եւ այսուհետեւ աւելի ստէպ պիտի տեսնեմք: Բայց այս ալ աղէկ պիտի գիտնամք որ Աստուած աւելորդ տեղը, անօգուտ

տեղը հրաշք չընենք. այլ այն ատենը միայն կփոխէ երբեմն բը-
նուծեան օրէնքները՝ երբոր հարկաւոր կճանչնայ մարդկանց
հաւատքը կերպով մը հաստատել, իւր աստուածային զօրու-
ծիւնը յայտնել նոցա, եւ գլխաւորապէս հոգեւոր օգուտ մը
պատճառել նոցա:

Գիտեմք որ տգէտ մարդիկ շատ անգամ հրաշք կհամարին
նաեւ այն կարգէ դուրս գործողութիւններն որ իրենց համար
միայն զարմանալի են, թէպէտ եւ ամենեւին բնուծեան օրէնք-
ներէն դուրս չեն. ինչպէս որ վարպետ ասպարարին (օխտապա-
զին) ըրած զարմանալի գործերն որ միայն ձեռքի շուտուծեամբ
կլինին: Նմանապէս շատ դիւրահաւան ու աւելորդապաշտ մար-
դիկ կան՝ ամէն ազգաց եւ ամէն դաւանանքի մէջ, որ մտքերնին
շիտակ դրած լինելով թէ Աստուած ամէն բանի կարող է եւ ամէն
տեսակ հրաշք կրնայ գործել, կարծեն մոլորութեամբ՝ թէ
նաեւ պէտք չեղած տեղը, անօգուտ տեղը, աւելորդ տեղն ալ
հրաշքներ գործեր է Աստուած եւ կգործէ. որ այնպէս չէ: Բայց
ասով միթէ կարելի է ըսել թէ հրաշք ըսուածը չկայ եւ չկրնար
լինել. այս ըսողը պէտք է ոչ միայն Աստուածաշունչ սուրբ գիր-
քը ուրանայ, հապա նաեւ բովանդակ մարդկային ազգիս վը-
կայութիւնը, որ ամէն տեղ՝ ամէն ժամանակ մեծամեծ եւ ըս-
տոյգ հրաշքներ տեսեր ու հաւատացեր են:

Թէ որ Մովսէսի եւ ուրիշ մարգարէից, նմանապէս Քրիստոսի
Տեառն մերոյ եւ առաքելոց գործած հրաշքները չափէ դուրս
շատ երեւնան ոմանց, պէտք է մտածեն թէ այն հրաշքներուն
հարկաւոր կամ աւելորդ լինելուն դատաստանը կտրելը իրենց
խելքին բանը չէ: Պէտք է ճանչնան ու խոստովանին թէ Աս-
տուած կարող է հրաշքընել՝ երբոր հարկաւոր եւ օգտակար տեսնէ
իւր անհուն իմաստութեամբը, եւ թէ ըրեր է ժամանակ ժամա-
նակ այն մեզի բնական է: Իսկ երբոր նոր հրաշք մը իրենց պատ-
մուի՝ որ ոչ միայն Աստուածաշնչէն դուրս է, հապա նաեւ ար-
ժանահաւատ կամ բազմաթիւ վկաներու եւ ապացոյցներու (իս-
պաւններու) կարօտ է, ազատ են հաւատալու կամ չհաւատա-
լու. մանաւանդ որ այս ալ ստոյգ է որ հրաշքներ ու հրաշալի
գործողութիւններ ընելը միայն մարգարէից ու արդարոց պա-
հած չէ Աստուած, հապա չարերուն, սուտ մարգարէներուն ու
կախարդներուն ալ թող կուտայ երբեմն Աստուած որ ընեն:

Մովսէսի հրաշագործութեանը վրայ այս տեղեկութիւնն առ-
նելէն ետեւ, երթամք իրեն հետ եգիպտոս ու տեսնեմք թէ ի՛նչ-

պէս կատարեց իւր փառաւոր պաշտօնը այս հրաշալի ու հրաշագործ մարդը:

Բայց պէտք է եղեր որ այն պաշտօնը լաւ կատարելու համար առաջուց մէկ գործնական խրատ մ'ալ ընդունի Աստուծմէ թէ ուրիշներուն օրէնք ղնողը պարտական է ուրիշներէն աւելի օրինապահ լինել: — Մովսէս Մադիանացոց երկրին մէջ գրտնուած ատենը իւր աստուածապաշտութիւնը այս բանիս մէջ ճիշդ չէր կատարած որ իւր երկրորդ որդին՝ Եղիազարը թլփատած չէր: Ճամբան երբոր մէկ իջեւան մը հասեր էին, հրեշտակ մը երեւցաւ Մովսէսի կնոջը Սեպիովրային ու կուզէր տղան մեռցնել, Սեպիովրան իսկոյն թլփատեց տղան, հրեշտակն ալ ներեց նոցա այն անհոգութիւնը:

Քորեք լեւը նոր հասեր էր Մովսէս իւր ընտանեօքը՝ երբոր եղբայրը Ահարոն Աստուծոյ հրամանաւը եգիպտոսէն եկաւ ու հոն տեսնուեցան պագտուեցան իրարու հետ: Մովսէս պատմեց Ահարոնի Աստուծմէ ընդունած հրամանները եւ ընելու հրաշքները. Ահարոն ալ սիրտ տուաւ Մովսէսի, ընտանիքը Մադիամ ճամբեցին, ու իրենք գնացին եգիպտոս:

Ժողովցին Մովսէս եւ Ահարոն Իսրայելացոց գլխաւորներն ու ծերերը, հասկըցուցին նոցա Աստուծոյ կամքը, եւ իրենց խօսքը հաստատեցին այն հրաշքներովն որ Աստուած ընելու հրաման էր տուեր: Շատ ուրախացան Հրեաները, փառք տուին Աստուծոյ որ իրենց քաշած նեղութիւնը տեսաւ ու խղճաց վրաները, եւ ամէնքը մէկէն երեսի վրայ ընկան երկրպագութիւն ըրին:

Յետոյ Մովսէս եւ Ահարոն գնացին Փարաւոնի առջեւն ելան: Այս Փարաւոն թագաւորը եգիպտացոց հին պատմութիւններուն մէջ Հռամսէս Բ ըսուածը կկարծուի, որ Սեսոստրի հայրն է եղեր. Հրեայք սովորութիւն ունէին եգիպտոսի թագաւորներուն առ հասարակ Փարաւոն անունը տալու: Ըսին թագաւորին թէ «Իսրայելացոց Աստուածը կուզէ որ իրեն ժողովուրդը արծրկես, որպէս զի երթան անապատին մէջ զոհեր մատուցանեն իրեն»: Փարաւոն պատասխան տուաւ թէ «Ո՞վ է այդ Աստուածը. ես զինքը չեմ ճանչնար, Իսրայելացիներն ալ չեմ արծրկեր»: Երբոր Մովսէս եւ Ահարոն նորէն վրայ տուին, Փարաւոն ձայնը բարձրացուց. «Դուք ո՞վ էք ըսաւ, որ ժողովուրդը իրենց գործէն աշխատանքէն ետ ձգել կուզէք. գնացէք տեղերդ, ամէն մարդ իւր բանին հետ լինի»: Յետոյ դարձաւ ըսաւ իրեններուն թէ «Այդ ժողովուրդը օրէ օր շատնալու վրայ է. աշ-

խատանքնին աւելցնեմք որ ուժէ իյնան ու խելքերնին գլուխնին գայ: Ասկից ետքը աղիւս (Թուղլա) շինելու համար պէտք եղած յարդը (Թօպանը, սամանը) դուք մի՛ տաք նոցա, Թող իրենք երթան ժողվեն, ու դուք դարձեալ պահանջեցէք որ առաջ օրը բանի աղիւս որ կշինէին՝ նոյնքան շինեն անպատճառ. պարապ մնացեր են, անոր համար փուսք բաներու հետ են, այնպէս ծանրացուցէք նոցա աշխատանքն որ ատեն չունենան այդպիսի բաներ մտածելու: «Մանրասցի՛ գործ մարդկանըն, եւ այնմ հոգասցեն, եւ մի՛ հոգասցեն իբանս տարապարտս»:

« Դեղձնայի քո զմարա »

Փարաւոնի մարդիկը ճիշդ կատարեցին տուած հրամանը, եւ չարաչար սաստկացուցին այն նեղուժիւնն որ արդէն կուտային իսրայելացոց: Գործաւորներուն վերակացուները, — որ նոյնպէս իսրայելացի էին, — գնացին Փարաւոնի գանգատեցան որ դիմանալու բան չէ ժողովրդեան քաշածը, մանաւանդ այն նոր հրահանքն ետքը. բայց Փարաւոն անոնց ալ նոյն սաստիկ հրամանը տուաւ: Վերակացուները Մովսեսի եւ Ահարոնի հանդիպեցան, «Աստուած տեսնէ ձեր դատաստանն ըսին. այս ի՛նչ փորձանք է որ բերիք մեր գլխուն. Փարաւոնին ու նորա իշխաններուն ձեռքը Թուր տուիք որ ջարդէ կոտորէ զվեզ»:

Մովսեսի սիրտն ալ կտրտեցաւ. դարձաւ ըսաւ Աստուծոյ, «Տէր, ինչո՞ւ այսպէս աւելցուցիր քու ժողովրդեանդ չարչարանքը, կամ Թէ զիս ինչո՞ւ դրկեցիր. ահա Փարաւոնին առջեւը ելած օրէս իվեր՝ ժողովրդեանդ չարչարանքը սաստկացաւ. չեմ գիտեր՝ ի՛նչպէս պիտի ազատես զվեզ այս նեղուժեանէն»: Աստուած ըսաւ Թէ «Դուն ալ կտեսնես շուտով՝ ինչե՛ր պիտի բերեմ ես Փարաւոնի գլխուն որ փառաւորապէս արձրկէ իմ ժողովուրդս, որ երթան ժառանգեն այն երկիրն որ խոստացեր եմ Աբրահամու, Իսահակայ եւ Յակոբայ՝ նոցա Թուրերուն տալու: Դնա այսպէս հասկըցուր նաեւ ժողովրդեան որ ճանչնան Թէ ես եմ իրենց Տէրն ու Աստուածը, ու պիտի հանեմ ազատեմ զիրենք Եգիպտոսէն որ երթան Քանանացոց երկիրը ժառանգեն»: Մովսէս ալ այս կերպով խօսեցաւ ժողովրդեան հետ, բայց շահ չըրաւ. այնչափ նեղացեր էր սրտերնին իրենց չարչարանացը աւելնալուն վրայ որ Մովսեսի խրատները ավենեւին բանի տեղ չդրին:

Աստուած նորէն հրամայեց Մովսեսի որ երթայ Փարաւոնին հետ խօսի՛ որ արձրկէ ժողովուրդը: Մովսէս պատասխան տրուաւ Թէ «Ահա իսրայելացիքն անգամ մտիկ չըրին իմ խօսքիս.

Փարաւոն ինչպէս մտիկ պիտի ընէ, մանաւանդ որ ես լեզուանի մարդ մը չեմ. «եւ ես չեմ խօսող ոք: — Փարաւոնին հետ թող եղբայրդ խօսի, ըսաւ Աստուած: Ես քու միտքդ կձգեմ ըսելիքդ, դուն ալ Ահարոնին կըսես: Փարաւոնին սիրտը ես պիտի խստացընեմ որ պատճառ լինի ինձի հրաշքներ գործելու եւ սոսկալի պատիժներ տալու իրեն եւ բոլոր եգիպտոսի, այնպէս որ ճանչնան թէ ես եմ ամէն բանի Տէրն ու ստեղծողը: Ուստի գնացէք Փարաւոնին առջեւն ելէք, ու թէ որ նշան մը ուզէ ձեր խօսքին ճշմարտութեանը, թող Ահարոն քու գաւազանդ օձ դարձնէ»:

Մովսէսին Փարաւոնի հետ անձամբ չխօսիլը, այլ Ահարոնի միջնորդութեամբը Աստուծոյ հրամաններն անոր իմացընելը աւելի մեծ պատիւ էր իրեն. ուստի կըսէ Աստուած Մովսէսի թէ «Ահա ետու գրեզ Աստուած Փարաւոնի, եւ Ահարոն եղբայր քո եղիցի քեզ մարգարէ: — Ահա դուն իմ փոխանորդս կլինիս՝ Փարաւոնին հրամաններ տալու, Ահարոն եղբայրդ ալ մարգարէի կամ դեսպանի պէս քու խօսքերդ թող իմացընէ անոր»: Երբոր Մովսէս եւ Ահարոն ելան նորէն Փարաւոնի առջեւ, եւ Փարաւոն նշան մը ուզեց տեսնել նոցա ձեռքովն որ իբր թէ հասկընայ որ յիշաւի Աստուծոյ կողմանէ եկեր են իւր հետը խօսելու, Ահարոն առաւ Մովսէսի գաւազանը, գետին ձգեց, ու մէկէն օձ դարձաւ գաւազանը: Փարաւոն թէպէտ զարմացաւ այն հրաշքին վրայ, բայց կախարդութեան տեղ դնելով կանչեց եգիպտացւոց իմաստուններն ու կախարդները, որոց գըլխաւորներն էին Յանէս եւ Յամրէս. նոքա ալ իրենց կախարդութեամբը նոյնպէս ըրին. այսինքն իրենց գաւազանները գետին ձգածներուն պէս՝ մէյմէկ օձ դարձան. բայց Ահարոնին գաւազանը զանոնք կու տուաւ: Փարաւոն այն բանը տեսածին պէս՝ սիրտը ամբացուց, մտիկ չըրաւ Մովսէսին ու Ահարոնի խօսքին, ինչպէս որ արդէն ըսեր էր Աստուած Մովսէսի: Բայց այս Փարաւոնի սրտին խստութեան եւ անոր յամառութեան (ինատին) պատճառ Աստուած չէր, — ինչպէս որ կընայ կարծել մէկը՝ Աստուածաշնչին խօսքը ծուռ առնելով. — հապա՛ այս միայն կնշանակէ այն խօսքը որ Աստուած գիտէր թէ Փարաւոն պիտի խստանայ, պիտի յամառի, ու չարգելեց, թող տուաւ որ իւր խստասրտութեան մէջ մնայ: Երբ որ Ահարոն եւ Մովսէս կախարդները ինչպէս կըրցան իրենց գաւազանները օձ դարձընել: — Մովսէսին ըրածը յայտնի հրաշք էր. իսկ կախարդներունը կամ թով-

չուծիւն էր, այսինքն օձ խաղցընելու վարպետութիւն, եւ կամ դիւական ու մոգական հնարք, որ նոյնպէս հրաշք կըսուի: Օձերուն ակռաները հանելով՝ զանոնք ուզածներուն պէս խաղցընելու սովորութիւնը մինչեւ հիմա կայ եգիպտոս ու Հընդկաստան. զարմանք չէ թէ որ Փարաւոնի կախարդներն ալ իրենց գաւազաններուն հետ կամ անոնց մէջ մէկմէկ օձ պահեր էին, ու գետին ձգածներուն պէս՝ օձերը դուրս ցատքեցին. մանաւանդ որ արդէն ականջնին հասած կլինէր թէ Մովսէս այն հրաշքն արդէն ըրեր է ժողովրդեան առջեւը, եւ Փարաւոնի առջեւն ալ պիտի ընէ: Ասոր մէկ ապացոյցն ալ այն է որ Մովսէսի գաւազանը իսկական ու զօրաւոր օձ դարձած լինելով, եւ ոչ թէ նոցա օձերուն պէս տկար եւ ուժամասի, կուլ տուաւ զանոնք: Բայց թէ որ ըսեմք թէ Աստուած թոյլ տուաւ որ այն անգամ ալ կախարդներուն խաբէական հնարքը սատանային ուժովը յաջողի, ինչպէս որ ուրիշ ատեններ ալ թոյլ տուածը կայ, դարձեալ Աստուածաշնչին ու ընդհանրապէս եկեղեցւոյ վարդապետութեան հակառակ բան մը ըսած չեմք լինիր: Քրիստոս Տէրն մեր ինքը ըսած է աւետարանին մէջ թէ «Ձի յարիցեն սուտ քրիստոսք եւ սուտ մարգարէք, եւ տացեն նշանս մեծամեծս եւ արուեստս, մինչեւ մոլորեցուցանել՝ թէ հնար ինչ իցէ՛ եւ զընտրեալն. — Սուտ քրիստոսներ եւ սուտ մարգարէներ պիտի ելնեն աշխարհիս ետքերն ու մեծամեծ հրաշքներ, ու այնպէս զարմանալի բաներ պիտի ընեն որ իրենց մնայ նէ՛ ընտրեալներն ալ պիտի մոլորցընեն»:

Երկրորդ օրը նորէն Աստուծոյ հրամանաւը Փարաւոնի առջեւն ելաւ Մովսէս, ու երբոր չկրցաւ անոր խօսք հասկըցընել՝ Ահարոն երկնցուց Մովսէսի գաւազանը եգիպտոսի ջրերուն վրայ, եւ իսկոյն ամէնն ալ արիւն դարձան. այնպէս որ ոչ միայն մարդկանց եւ անասնոց խմելու ջուր չմնաց, հապա նաեւ նեղոս գետին մէջի ձկները մեռան ու գետը հոտեցուցին: — Փարաւոնի կախարդները հնարքով մը ասոր նման բան մըն ալ ըրին, եւ Փարաւոն դարձեալ խստացաւ, չարձըկեց ժողովուրդը:

Նեղոս գետին ու բոլոր եգիպտոսի ջրերուն այս կերպով արիւն դառնալը եգիպտոսի տասը հարուածներուն կամ պատիժներուն առաջինն է. վասն զի քանի մը շաբթուան մէջ այն սոսկալի հարուածները ետեւէ ետեւ տեսնելով՝ Փարաւոն շատ անգամ խոստացաւ Մովսէսի որ արձըկէ ժողովուրդը. բայց հարուածներուն մէկը դադրելուն պէս՝ նորէն յամառութիւնը

ձեռք կառնուր ու խօսքին վրայ չէր կենար, ուստի ետեւէն նոր հարուած մը կըբերէր Մովսէս բոլոր եգիպտացւոց վրայ:

Այսպէս ահա երկրորդ հարուածը գորտ (խուռպալա) էր: այսինքն Ահարոն Մովսէսի հրամանովը ձեռքը նեղոս գետին վրայ երկընցուց Փարաւոնին առջեւը, եւ մէկէն իմէկ բոլոր եգիպտոսի երկրին երեսը, եւ մինչեւ տներուն մէջերն ու ամանները, թոնիրները, կերակուրները գորտով լցուեցան: Փարաւոնի կախարդներն ալ գորտեր հանեցին կամ երեւցուցին իրենց կախարդութեամբը, կըսէ սուրբ գիրքը. բայց անոնց քրածին Մովսէսի քրածէն շատ պակաս լինելը անկէց ալ կիմացուի որ Փարաւոն այն կախարդներուն չապսպըրեց գորտերը վերցընելը, հապա Մովսէսի եւ Ահարոնի աղաչեց որ աղօթք ընեն, ու այն սոսկալի հարուածը դադրի եգիպտոսէն: «Ժամանակ որոշէ ինծի, ըսաւ Մովսէս. ե՞րբ ընեմ աղօթքը որ վերնայ գորտը ձեզմէ: — Վաղը» ըսաւ Փարաւոն: «Այդպէս թող լինի, որ իմանաս թէ մեր Աստուծմէն զատ մէկը չկայ այս պատիժները ձեզի տուող ու դադրեցընող»: երկրորդ օրը գետէն դուրս գրտնուած գորտերը ամէնն ալ ջարդուեցան. Փարաւոն ալ տեսնելով որ ազատեցաւ այն հարուածէն, նորէն խստացաւ:

Երրորդ հարուածն այս եղաւ որ Ահարոն Մովսէսի գաւազանովը հողին զարնելուն պէս՝ մարդկանց ու անասնոց վրան գլուխը մունով՝ այսինքն մանր ու կճող ճանճերով լցուեցաւ: Փարաւոնի կախարդներն ալ ուզեցին անոր նման բան մը ընել ու չկրցան. «Այս տեղը Աստուծոյ բանը կայ. — Մտան Աստուծոյ է այդ» ըսին. Փարաւոն ալ աւելի բարկացաւ անմտութեամբ ու չարձըկեց ժողովուրդը:

Չորրորդ հարուածը շանճանճ էր, որով բոլոր երկիրն ու տները, Փարաւոնի պալատն ալ լցուեցաւ, եւ անտանելի չարչարանքով կտանջէր եգիպտացիները: Իսկ Իսրայելացիք ու իրենց բնակած երկիրը Գեսեմ՝ ազատ էին թէ՛ այն հարուածէն եւ թէ՛ մէկալներէն: — Փարաւոն կանչեց Մովսէսն ու Ահարոնը, «Գնացէք զոյ մատուցէք, ըսաւ, ձեր Աստուծոյն, բայց եգիպտոսի սահմանէն դուրս մի՛ ելլէք»: Մովսէս պատասխան տուաւ թէ «Այդ լինելու բան չէ. թէ որ մեք եգիպտացւոց պաշտած կենդանիները առնուիք մորթեմք զոյ ընեմք, եգիպտացիք կըբարկօծեն զմեզ, հապա մեր Աստուածը մեզի ինչպէս որ ապսպրեր է՝ այնպէս պիտի ընեմք, այսինքն երեք օրուան հեռաւորութեամբ ճամբայ պիտի երթամք անապատ տեղ ու հոն պիտի մատուցանեմք մեր զոյները: — Ուրեմն գնացէք, ըսաւ

Փարաւոնն. միայն թէ շատ հեռու չերթաք»: Մովսէս աղօթք ըրաւ, շանահանձը դադրեցաւ. բայց Փարաւոնն խօսքէն ետ դարձաւ, չարձրկեց ժողովուրդը:

Հինգերորդ հարուածով սարսափելի ջարդ մը ընկաւ եգիպտացոց անասուններուն մէջ. եւ որովհետեւ իսրայելացոց անասուններուն ամենեւին վնաս մը չեղաւ, Փարաւոնն նորէն խտացաւ, հրաման չտուաւ որ ելլեն անոնք իւր երկրէն:

Վեցերորդ հարուածը տալու համար՝ ձեռքովը մոխիր առաւ ու դէպի երկինք ցանեց Մովսէս Փարաւոնին ու նորա իշխաններուն առջեւը. իսկոյն բոլոր եգիպտոսի օդը փոշիով (Թօզով) լցուեցաւ, եւ ամէն մէկ մարդու եւ անասունի վրան գլուխը խօցերով ուռեցքներով ծածկուեցաւ. Փարաւոնի կախարդներն ալ լցուեցան վէրքերով ու չկրցան Մովսիսի առջեւը կենալ:

Եօթներորդ պատիժը սոսկալի կարկուտ եղաւ՝ ահագին որոտմունքով, եւ դուրս տեղ որչափ մարդ ու անասուն որ պատահեցաւ՝ մեռուց, ծառերը կոտորեց, բոյսերը փճացուց. միայն անոնք ազատեցան որ Մովսէսի խօսքին հաւատալով՝ առաջուց ներս քաշուեր էին ու իրենց անասուններն ալ ներս առեր էին: — Փարաւոն կանչեց Մովսէսն ու Ահարոնը, «Մեղայ ըսաւ. այսուհետեւ հասկըցայ որ Աստուած արդար է, իսկ ես ու իմ ժողովուրդս ամբարիշտ եւ անիրաւ. աղօթք ըրէք որ դադրին այս կարկուտը, որոտմունքն ու կրակները, յետոյ կարձրկեմ զձեզ, չէք մնար այսուհետեւ»: Մովսէս պատասխան տուաւ թէ «Գիտեմ որ դեռ ոչ դու բաւական վախցար Աստուծմէ եւ ոչ քու մարդիկդ. բայց ահա քաղաքէն դուրս կելլեմ, ու ձեռքս դէպի երկինք վերցընելով աղօթք ընելուս պէս կդադրին կարկուտն ալ, կրակներն ալ, ձայներն ալ»: Այնպէս ալ եղաւ. բայց Փարաւոնի սիրտը նորէն կարծրացաւ:

Ութերորդ պատիժ՝ սաստիկ մարախ մը սպառնացաւ Մովսէս Փարաւոնի՝ որ բոլոր եգիպտոս կոխէ ու կարկուտէն մնացած կանաչութիւն մը կար նէ՝ ա՛յն ալ ուտէ: Երբոր տեսաւ որ Փարաւոնն միտք չունի հրաման տալու, ձգեց ելաւ առջեւէն: Փարաւոնին մարդիկը ելան ըսին իրեն թէ «Այս քանի՛ մէկ փորձանքներէ պիտի չազատիմք. արձրկէ այդ մարդիկը, Թող երթան պաշտեն իրենց Աստուածը. չե՞ս գիտեր որ եգիպտոսը կորաւ փճացաւ: — Գնացէք կանչեցէք, Թող գան» ըսաւ Փարաւոնն. ու երբոր ետ դարձուցին, «Ահա հրաման կուտամ որ երթաք ձեր Աստուածը պաշտէք, ըսաւ. բայց տեսնեմ որո՞նք պիտի լինին գնացողները»: Մովսէս պատասխան տուաւ թէ

«Մեր մեր երիտասարդներովն ու ծերերովը, մանչերովն ու աղջիկներովը, կովերովն ու ոչխարներովը պիտի երթամք: — Այդ, պէս չըլինիր, ըսաւ Փարաւոն. ըսեմք թէ ես ձեզ արծըկեմ, երթաք բարով. բայց ձեր ստացուածքներն ինչո՞ւ հետերդ պիտի տանիք. տեսա՞ք որ ձեր միտքը չարութիւն է. միայն էրիկ մարդիկը թող երթան, իրենց զոհերը թող ընեն. մի՞թէ այդքանը չէ՞ր ձեր ուզածը»: Այս խօսքին վրայ Մովսէս եւ Ահարոն դուրս ելան. Մովսէս ձեռքը երկընցընելուն պէս՝ հարաւային սաստիկ քամի մը ելաւ որ բոլոր օրն ու բոլոր գիշերը փչելով՝ անթիւ անհամար մարախ (չէքիրկէ) քշեց բերաւ, ու անով ծածկուեցաւ բոլոր եգիպտոսին երեսը. այնպէս որ ոչ պտուղ մնաց, ոչ ծառ, ոչ բանջար, ոչ խոտ, որ ազատէր մարախէն: — Փարաւոնի սուտ մեղայովն ու աղաչանքովը Մովսէս աղօթք րրաւ, ու հիւսիսային քամիով բոլոր այն մարախները գնացին Կարմիր ծովը թափեցան. բայց Փարաւոն նորէն չկեցաւ իւր խօսքին վրայ:

Իններորդ հարուածն այս եղաւ որ Մովսէս ձեռքը դէպի վեր երկնցընելուն պէս՝ սարսափելի խաւար մը պատեց բոլոր եգիպտացւոց երկիրը, բացի Խարայէլացւոց բնակած երկրէն որ լոյս էր: Երեք օր քշեց այն սոսկալի մութն ու խաւարը, խաւար շօշափելի՝ կըսէ սուրբ գիրքը, այսինքն այնպէս թանձր որ կարծես թէ կըռնուէր. երեք օր մարդ մարդու երես չտեսաւ, ու ամէն մարդ անկողնէն դուրս ելլելու կվախնար: — Կանչեց Փարաւոն Մովսէսն ու Ահարոնը, «Գնացէք, ըսաւ, գնացէք պաշտեցէք ձեր Աստուածը, բայց միայն ձեր անասունները հոս թողուցէք»: Պատասխան տուաւ Մովսէս թէ «Մեր մեր անասուններուն մէկ կճղակն ալ կամ ըղունկն ալ հոս չձգելէն ետեւ, դուն ալ պէտք էր որ մեզի կենդանիներ տաս որ տանիմք ողջակէզ ու զոհ մատուցանեմք Աստուծոյ, որպէս զի քու մեղքերուդ ալ թողութիւն տայ: — Ել գնա առջեւէս, ըսաւ Փարաւոն, մէյմ՝ալ աչքիս մի՛ երեւնար, ապա թէ ոչ պատիժդ մահ է: — Եթէ այդպէս է, այսուհետեւ իմ երեսս չես տեսներ» ըսաւ Մովսէս:

Աստուած ըսաւ այնուհետեւ. Մովսիսի թէ մէկ հարուած մըն ալ պիտի տամ Փարաւոնի ու բոլոր եգիպտոսի. անոր վրայ ըզձեզ պէտք է որ արծըկէ: Գնա իմացուր այս բանս Խարայէլացւոց ու ծածուկ խրատ տուր որ իրենց դրացիներէն ոսկեղէն ու արծըլմեղէն զարդարանքներ ու հագուստներ իբր թէ փոխ ուզեն առնուն»: Այս Աստուծոյ մասնաւոր հրամանին միտքը

անտարակոյս այն էր որ ասով կերպով մը արդարութիւնը տեղը երթայ, եւ եգիպտացիք որ այնչափ չարչարանք տուեր էին Իսրայելացւոց անիրաւութեամբ, եւ գուցէ շատին աշխատանաց վարձն ալ չէին վճարած ու վճարելու միտք չունէին, այս օրով հատուցում մը ըրած կլինէին նոցա՝ Թէպէտ եւ աւամայ: Եգիպտացիք սիրով տուին, կըսէ սուրբ գիրքը, Իսրայելացւոց ուզած զարդարանքները որով անշուշտ ըսել կուզէ Թէ իրենց խղճմտանքն ալ կզարնէր՝ այն ժողովուրդը զուր տեղը այնքան չարչարածներուն վրայ: Գիտեմք որ քրիստոնէական սուրբ օրէնքը մովսիսականէն շատ աւելի կատարեալ լինելով հրաման չիտար որ զրկանք քաշողը իւր զրկանքին փոխարէնը խաբէութեամբ ձեռք ձգէ, ինչպէս որ ըրին Իսրայելացիք. բայց որովհետեւ Իսրայելացւոց ըրածն ալ Աստուծոյ հրամանն էր, պէտք է հաւատամք որ այն հրամանը այնպիսի խորհուրդ մը ունէր եւ այնպիսի արդարութիւն մը՝ որ մեր սովորական հասկըցողութենէն վեր է:

Եգիպտոսի հարուածները կարգացող ու լսող անձանց մէջ գտնուած են ոմանք որ կըսեն Թէ անոնք ամէնն ազ բնական բաներ են որ ժամանակ ժամանակ կպատահին ամէն տեղ, մանաւանդ եգիպտոսի պէս տաք երկիրներ, ինչպէս մարախ, շանահանձ, սաստիկ մէգ ու մառախուղ, կարկուտ, կենդանիներու ջարդ, եւ այլն. ուրեմն Մովսեսի ատեն պատահածները ինչո՞ւ հրաշք պիտի համարուին:—Այս բանիս պատասխանը յայտնի է: Նախ՝ Թէ որ այն ամենայն հարուածները բնական բաներ ալ լինէին, բայց անոնց ամենուն ալ իրարու ետեւէ մէկ ամսուան կամ վեց շաբթուան մէջ հանդիպիլը ամենեւին բնական չէ. հրաշքով եղածին տարակոյս չկայ: — Երկրորդ, բոլոր այն հարուածները Մովսէս առաջուց գուշակեց. ըսած օրը՝ ըսած ժամուն կպատահէին, ու դադրեցընել ուզածին պէս կդադրէին. ըսել է Թէ բնական բաներ չէին, վասն զի բնութեան վրայ այնպիսի իշխանութիւն ունենալը ամէն մարդու չէ տրուած: — Երրորդ, Իսրայելացիք՝ որ եգիպտոսէն շատ հեռու չէին բնակիր, այն հարուածներէն բոլորովին ազատ մնացին, որ այս ալ ամենեւին բնական չէ, ուրեմն հրաշք է: — Զորրորդ, այն պատիժները եւ հարուածները պարծանքով ու սնափառութեամբ չէր գործեր Մովսէս, ինչպէս որ խաբէբայ մարդիկ կաշխատին որ այսպիսի բաներով անուն հանեն. այլ իրեն գործածները ամէնն ալ պատճառաւ, վախճանով ու հարկաւոր հետե-

76

0023390

2013

